

Պ-646²-21.10.2014,27.11.2014-ՖՎ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-4-Ն օրենքի (այսուհետև՝ օրենք) 19-րդ հոդվածի 9-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Վերահսկողության արդյունքում ընթացիկ հաշվետվության կազմումը և վերահսկիչ պալատի կողմից դրա հաստատումը կատարվում է վերահսկողության ավարտից հետո մեկամսյա ժամկետում:»:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝

«Տվյալ տեղեկատվությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում վերահսկիչ պալատն այն տրամադրում է Ազգային ժողովին:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՅԵՂԻՆԱԿԸ	ՀՈԴՎԱԾԸ, ԿԵՏԸ, ԵՆԹԱԿԵՏԸ /ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ/	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ				
1	ՀՀ կառավարություն	Հոդված 1	«այդ թվում՝ Բյուջետային գրասենյակի միջոցով ներկայացված» բառերը փոխարինել «այդ թվում՝ Բյուջետային գրասենյակի առաջարկությամբ հանձնաժողովի կամ պատգամավորի կողմից ներկայացված» բառերով	Առաջարկվում է Բյուջետային գրասենյակի օժանդակությամբ ձևակերպված պատգամավորական հարցումներն Ազգային ժողովից դուրս ուղարկել հարցման հեղինակի միջոցով: Առաջարկությունն ընդունված է. Նախագծի հոդված 1-ը և հոդված 2-ում «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ կետի 8-րդ ենթակետը վերախմբագրվել են:
2	ՀՀ կառավարություն	Հոդված 2	նոր խմբագրությամբ շարադրված գործող օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետի երկրորդ	Առաջարկությունն ընդունված է.

			նախադասությունը հանել	Հանվել են «և պետական բյուջեի պարտքերը» բառերը, ենթակետը վերախմբագրվել է:
3	ՀՀ կառավարություն	Հոդված 2	նոր խմբագրությամբ շարադրված գործող օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի երկրորդ պարբերությունը հանել	Առաջարկվում է Բյուջետային գրասենյակի հարցումներն Ազգային ժողովից դուրս իրականացնել Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովի միջոցով: Առաջարկությունն ընդունված է. Ենթակետը վերախմբագրվել է:
4	ՀՀ կառավարություն	N1 հավելվածի 13-րդ կետ	«7-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով և» բառերը հանել:	Առաջարկությունն ընդունված է (Տես սույն ամփոփաթերթիկի N 1 կետ:)
5	ՀՀ կառավարություն	N1 հավելվածի 18-րդ կետ	Հանել	Առաջարկությունն ընդունված է (Տես սույն ամփոփաթերթիկի N 2 կետ:)
6	ՀՀ կառավարություն	N1 հավելվածի 37-րդ կետ	Հանել	Առաջարկությունն ընդունված է (Տես սույն ամփոփաթերթիկի N 1 և N 3 կետերը:): Կետը վերախմբագրվել է:
7	Հեղինակներ	N2 հավելվածի՝ 1-ին կետ	«որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրով՝ մինչև տվյալ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը» բառերը փոխարինել «5 տարի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրով» բառերով	Առաջարկությունն ընդունված է: